**Արձանագրություն N 2**

**ՀՀՔԿ-ԳՀԱԾՁԲ-19/38 ծածկագրով <<Սևան>> ազգային պարկի>> Ճաշեն-Սևանի թերակղզի հատվածի գոտևորման նախագծի և քաղաքաշինական կանոնադրության մշակման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան | 11.11.2019թ.
ժամը 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Լ. Պայյան
Հանձնաժողովի անդամներ՝ Մ. Գրիգորյան
Հ. Հարությունյան
Հ. Դավթյան
Ա. Յազչյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան

**1. ՀՀՔԿ-ԳՀԱԾՁԲ-19/38 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակցի մասին**

---

(Լ. Պայյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

ա) Գնման ընթացակարգի հայտը բացվել է www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի նոյեմբերի 7-ին, ժամը 11:30-ին:

բ) Գնման գործընթացն իրականացվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

գ) Գնման առարկայի նախահաշվային արժեքը կազմում է 43 000 000 (քառասուներեք միլիոն) ՀՀ դրամ:

դ) Գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

ՀՀ դրամ

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը) | ԱԱՀ | Առաջարկված ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| 1 | <<Արխիտոն>> ՍՊԸ | 60 000 000 | - | 60 000 000 |

1.2 ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ին N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և ծանուցել բավարար գնահատված վերը նշված կազմակերպությանը 2019 թվականի նոյեմբերի 11-ին ժամը 11:30-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գնումների կազմակերպման բաժնում (ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, IV հարկ, 460 սենյակ) գների նվազեցման շուրջ բանակցություններին մասնակցելու մասին:

1.3 <<Արխիտոն>> ՍՊԸ-ն ներկայացել է հրավիրված բանակցություններին, որի ընթացքում ներկայացրել է հետևյալ նոր գնային առաջարկը.

ՀՀ դրամ

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը) | ԱԱՀ | Մասնակցի կողմից առաջարկված ընդհանուր գին |
|---|---|---|---|---|
| 1 | <<Արխիտոն>> ՍՊԸ | 43 000 000 | - | 43 000 000 |

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:*

## 2. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/38 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի մասին

---

(Լ. Պայյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը, հանձնաժողովի գնահատման թերթիկները և Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովի կողմից հայտը գնահատվել է հետևյալ կերպ.

| Մրցույթում զբաղեցրած տեղը | Մասնակցի անվանումը | Հայտի գնահատականը |
|---|---|---|
| 1 | <<Արխիտոն>> ՍՊԸ | բավարար |

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

## 3. ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

---

(Լ. Պայյան)

3.1 Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ հանձնաժողովը որոշում է.

ա) ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել գնման ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

բ) Ծանուցել 1-ին տեղը զբաղեցրած մասնակցին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

**4. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/38 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին**

---

(Լ. Պալյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելու օրվանից հաշված մինչև տասն աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ________________ Լ. Պալյան

Անդամ՝ ________________ Մ. Գրիգորյան

________________ Հ. Հարությունյան

________________ Հ. Դավթյան

________________ Ա. Ցագլյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար՝ ________________ Ն. Հարությունյան